**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 օգոստոսի 2022 թվականի N 565-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 60-րդ կետերը և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին»N 93-Ն որոշումով՝

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Տաշիր համայնքի վարչական տարածքում գտնվող ՀՈՒՇ ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող գույքին (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայական՝ 21102021-06-0027 տրված՝ 21.10.2021-ին) ՀՀ Լոռու մարզ, համայնք Տաշիր,քաղաք Տաշիր, Կիրովի փողոց, 14 արհեստանոց հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 370 արհեստանոց (փոստային դասիչ՝ 2102) հասցեն:
2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 01
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 օգոստոսի 2022 թվականի  N 566-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄՅՆՔԻ ԱՎԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ( ԱՐՏԱԳՆԱ) ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

Սույն թվականի օգոստոսի 2-ին հրավիրել Տաշիր համայնքի ավագանու արտահերթ (արտագնա) նիստ Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում՝ հետևյալ օրակարգով՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի օգոստոսի 1-ի արտահերթ (արտագնա) նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի հուլիսի 15-ի N55-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին :
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և համայնքի վարչական սահմաններում գտնվող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ ատադրական նպատակային նշանակության, 06-008-0207-0037 կադաստրային ծածկագրով 1.0126 հեկտար արդյունաբերական օբյեկտների հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
4. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2020 թվականի հունվարի 30-ի N7-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. օգոստոսի 01
ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 օգոստոսի 2022 թվականի N 567-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԼԱԼԱ ՆԱՐԳԻԶՅԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ»-ԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Լալա Նարգիզյան Միքայելի»-ի 2022 թվականի օգոստոսի 2-ի N2 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով:

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 383 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Լալա Նարգիզյան Միքայելի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ եռամսյակների համար համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. օգոստոսի 02
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

02 օգոստոսի 2022 թվականի N 568-Ա

**ԱՇՈՏ ՍԱՀԱԿԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԽԱՆՈՒԹԻ ԵՎ ՊԱՀԵՍՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Աշոտ Սահակի Գրիգորյանի դիմումը (մուտք՝ 27.07.2022-ի ՄՀ-109-22)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Աշոտ Սահակի Գրիգորյանին տալ խանութի և պահեստի կառուցման նախագծման թույլտվություն:
2. Աշոտ Սահակի Գրիգորյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 02
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

02 օգոստոսի 2022 թվականի N 569-Ա

**ԼԵՌՆԻԿ ԼԱԶԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԾԱԾԿԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով և հիմք ընդունելով քաղաքացի Լեռնիկ Լազարի Հակոբյանի դիմումը (մուտք՝ 02.08.2022-ի ՄՀ-113-22)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Լեռնիկ Լազարի Հակոբյանին տալ ծածկարանի նախագծման թույլտվություն:
2. Լեռնիկ Լազարի Հակոբյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 02
ք.Տաշիր

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

 այաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2022 թվականի N 570-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-Ի N465-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայատանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի 2022 թվականի հունիսի 16-ի «Հայստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի սեփականություն հանդիսացող Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Վ.Սարգսյան փողոց, թիվ 116/2 հասցեում գտնվող ինքնակամ կառուցված շինությունը և դրա սպասարկման և պահպանման համար առանձնացված հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 465-Ա որոշման «20048 (քսան հազար քառասունութ)» թվերը փոխարինել «23048 ( քսաներեք հազար քառասունութ)» թվերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

04 օգոստոսի 2022 թվականի N 571-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Սարգսի Կավալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական N1818701 տրված 16.06.2003) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 03.08.2022-ի ՄԴ-481-22)

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝**

1. Քաղաքացի Սամվել Սարգսի Կավալյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.
1) 06-042-0169-0065 կադաստրային ծածկագրով 0 . 19 հա խոտհարք:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տաշիր սպասարկման գրասենյակ:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականները ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2022 թվականի N 572-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 101-րդ հոդվածի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածով, հիմք ընդունելով քաղաքացի Սամվել Սարգսի Կավալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասից (վկայական N1818705 տրված 16.06.2003) հրաժարվելու մասին դիմումը (մուտք՝ 03.08.2022-ի ՄԴ-481-22)

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Քաղաքացի Սամվել Սարգսի Կավալյանին սեփականության իրավունքով պատկանող հետևյալ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն.
1) 06-042-0117-0002 կադաստրային ծածկագրով 0 . 174 հա վարելահող:
2. Աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումն ընդունվելուց հետո, սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով՝ 15-օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Տաշիր սպասարկման գրասենյակ:
3. Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նկատմամբ իրավունք հավաստող վկայականները ստանալուց հետո՝ համայնքի ավագանու առաջիկա նիստում ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի գույքագրման փաստաթղթերում առաջացող փոփոխությունները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2022 թվականի N 573-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշումով, ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N93-Ն որոշման հավելված 1-ի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի դիմումը ի դեմս կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի դիմումը (մուտք՝ 20.06.2022-ի. N 01/27.2/6391-2022)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեին՝ ի դեմս կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի, տալ փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցի կառուցման շինարարության թույլտվություն: 2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն՝ ի դեմս կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի, պարտավոր է շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն 3 օր առաջ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին ներկայացնել 2-5 ձևի տեղեկանք:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**


ւյաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 օգոստոսի 2022 թվականի N 574-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԹԵԼՄԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՅԱՏԻ »-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Թելման Մարգարյան Սայատի» 2022 թվականի օգոստոսի 1-ի N68 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Երևանյան փողոց, տուն 168 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Թելման Մարգարյան Սայատի» հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի երրորդ եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashir.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

04 օգոստոսի 2022 թվականի N 575-Ա

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԹԵԼՄԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՅԱԹԻ»-ԻՆ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 24:00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով անհատ ձռենարկատեր «Թելման մարգարյան Սայաթի» -ի 2022 թվականի օգոստոսի 1-ի N 1 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45 -րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 2-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2022 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N93-Ն որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 168 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Թելման Մարգարյան Սայաթի» հայտը բավարարել և նրան տալ 2022 թվականի համար 24:00-ից հետո աշխատելու թույլտվություն:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2022թ. օգոստոսի 04
ք.Տաշիր